2. ԳՈԼ-ԲԱՐԻՆ

Վախտի ժամանակով կէլնի մեկ թաքավոր:

Էս թաքավոր շատ երևելի, հարուստ երկիրներայ տեր, զորք, ասքյար-լասքյար, թոփ-ջարախանա, թեջիր-ռազրրգյան, ըսկուն որ հեչ մեյ թաքավոր աչք չի տա մեր թաքավրուն, շահըն-շահ կասեն: Ամա ի՞նչ անեմ, որ հեչ տղա չունի: Էն կանդար տեղ-դարման կանի, լոխման-հաքյիմ, դոքտոր-ըժիշկներ կկանչի, ինչ կանդար որ տեղ կուտան, դարման կանեն, հեչ ճար չէլնի:

Թաքավուրու ճար կկտրի, կկանչի մեկ օր ուր վազիրին, կասի. - Վազիր, ինչ որ արի, ճար չէլավ, զիկ տըղեմ չէլավ, որ ես էլ ուրախնի, չարս կըտրեր ի, էլ ճար չկա: Էլի՛ կնա էրկու ծեռքյ դավրեշի խալավ ճարի, խայնենքյ, դյունյեն էն կանդար կան կյանքյ, որ չյում զիկ տղի ճար մ'էլնի:

Վազիր էլավ կնայ էրկու ձեռքյ դավրեշի խալավ իպե, մեյն ինքյ խակյավ, մեյն՝ թաքավոր: Սադրազամին տրին թախտ, ուրենքյ ինգյան ճամրախ, յաեու-յալլահ, կնային դյունյեն կան գյալ:

Շատ մի կնային, օր մ'էրկու շապաթ մ'իրեքյ, ամիսըմ չորս, տարի մը խինգյ: Մեր թաքավոր ու վազիր դյունյեն կան էկան: Իսկի մեյ տեղե ճար չկընդան:

Թաքավոր աջըղյավ, ասայ. - Վազի՛ր, էլ ճար չկա, արի եր տառնանքյ:

Էրկուս մեյտեղ եր տառցան էկան: Մեկ օր ի մնայե որ խասնեն ուրենց երկիր, չոլ ու չինման տաշտի մեչ, պաղ ախպըրի մը վերեն կնստեն, ուրենց խամար թե ճյուր կխմեն, թե խայ կուտեն, մեկ էլ կտիսնան՝ ուրիշ դավրեշմ' էն դիեեն էկավ:

Խեր կյալուն ասայ. - Պարև քյե, շահ ապրած կենաս, պարև քյե վազիր:

Թաքավորն ու վազիր շիվարան, մնային: Ասին. - Էս ի՞նչ պան

ի, մեր խալըվներ իսորիյ շատ խին ի, մենքյ ավելի կեղտոտ, էս ի՞նչխ էլավ որ իմյավ՝ ես թաքավորն եմ, տյու վազիր:

Դավրեշն ասայ. - Թաքավո՛ր ապրած կենաս, ես կիտեմ տյու թաքավորն ես, էս էլ վազիր ու ինչ դարդի կան կուկյաք:

Թաքավորն ասայ. - Է՜յ դավրիշ բաբա՛, որ տյու կիտես մենքյ ինչ դարդի ման կուկյանք, դարման էլ կանաս անե:

Դավրեշ խսանեց ուր ծոցիյ խնձոր միտուր, ասայ. - Թաքավոր ապրած կենա, առ էսա խնձոր, իրիկուն տար խետ քյո կնգյան մեյտեղ պառկեքյ, կես տյու կուտես, կես քյո կնիկ: Աստված քյե տղա կուտա: Ամաև են կավլով, թե լաճ, թե ախչիկ՝ անուն չես տնե, չյում ես կուկյամ:

Թաքավորն առեց խնձորն, շատ ուրախցավ: Դավրեշ կուրիսավ:

Վազիր շըշկըռավ մնայ: Աչքեր ճըմըռթեց, ասայ. - Տեր աստված, էսա աղո՞ղթ ի՝ թե էրազ:

Վարհասըլի, թաքավոր ինան վազիր տառցան էկան տուն, ուրենց դավրեշանի խալըվներ խանիցին, թամիզըմ լոխկըցան, թաքավոր կնայ նստավ վեր ուր քյաղքյին, տոնամեյե արիցին, թոփ-թվայիներ թալիցին, վազիր, սադրազամ, օնիքյիլար, թեջիր-բազըրգյան սրայով էկան թաքավուրուն կյալպարի:

Քիթյունքյ որ ցըվըրվան կնայցին, իրիկուն մթնավ, թաքավոր կնայ ուր քնելու օդեն խետ ուր կնգյան, ուրենց աղոթքն արիցին, խնձոր խանիցին, կես իյի կէրավ, կես՝ կնիկ, պառկան քնան:

Աստծու խրամանով կնիյ մնայ տղով: Ինն ամիս, ինն օր,ինն սահաթ, ինն թանքեն թըմըմավ, թաքավուրուն ախչիկմ՝ էլավ: Թաքավոր շատ ուրախցավ:

Վարհասըլի, ախչիյ ճոչանցավ, էլավ չյում տաս-տասնեութ տարեկան, ոչ մի անուն չունի, ըիթյունքյ խանըմ կասեն:

Մեկ օր վազիր, սադրազամ, օնիքիլար կժողվըտվին իրար, կուկյան թաքավուրու մոտ, կասեն. - Թաքավոր ապրած կենա՛, քյո ախչիկ ճոչայեր ի, էլեր ի էսա կանդար, անուն չունի, էլե տանելու: Պիրենքյ քյո ախչըկան անունըմ տընենքյ:

Թաքավոր ինչ կանդար կասի. «Ախըր ես կավլ եմ արե խե դավրեշին, որ դավրեշ կյա՛ իմ տղի անուն տնի», - ճար չէլնի:

Քիթյունքյ կասեն. - Թաքավո՛ր ապրած կենա, տասնին տարի առուց դավրեշի մեկ խուրար մի տվե, վո՞վ կիտի՝ դավրեշ սա՞ղ ի, թե մեռե, կուկյա, թե՝ չիկյա, միտն ի կամ միտ չի: Վո՞վ կիտի մկա որ աշխարն ի, տյու պե քյո ախչկան անուն տնենքյ:

Թաքավուրու ճար կկտրի, կկանչի ախչիկ, կուկյա էնտեղ: Մեկն կասի Շուշան, մեկը՝ Մարան, մեկն՝ Արմաղան, մեյ մեկ մեյ պան կասեն:

Թաքավոր մեկ անվան էլ չի խավնի. մեկել ռիրդան դավրեշ կմտնի ներս:

Թաքավոր որ կտիսնա, ամյություն կյլոխ կկոռի:

Վազիր-սադրազամ կթոնեն, կփսխնեն:

Դավրեշ կասի. - Թաքավոր ապրած կենա, թե տյու պայման իր արե, որ քյո ախչկան անուն չտնիր չյուր ես կյի, ըսկընա՞ խոսքի տեր կմնան: Աեան, գյո տյու, գյո քյո ախչիկ, ինչ կիտես, են արա՛, ես կնայի:

Դավրեշ ռիրդան թողեց կնայ:

Թաքավոր շատ տրտմավ, վտշըմվավ ուր արածին, կանչեց ախչկան, ասայ. - Հայդե՛, բալա՛մ, կնա, էլ տյու իմ տղեն չես, քյե տվիր եմ դավրեշին, էլ իմ տան մեչ չմնաս:

Ախչիկ լալելեն ինկյավ ճամբախ, կնայ:

Շատ կնայ, թե քիչ կնայ, մեկ էլ դավրեշի սիրտ մըռմըռայ, ախչկան աչիչն էրնայ, խառնյայ. - Դե՞ր կերթաս:

Ախչիկն ասայ. - Որ տյու էկար իմ խոր տուն, ինատ արիր, թողիր կնայիր, իմ խերն էլ զիկ մլեց տյուս, ասայ. «Կնա, էլ իմ ախչիյն չես, քյե տվիր եմ դավրեշին»: Ես էլ ինգյիր եմ սար-քյար, կան կուկյամ, չյում գյո քյե կընդա:

Դավրեշն ասայ. - Բալա՛մ, տյու իմ ախչիյն ես, խո թաքավուրուն չես: Քյո խեր ինչխ քյե ճամբեր ի մո զիկ, եր տառոյի կնա, ես նոր քյե նվիրեցի քյո խոր, աստծու օխնիթկ վերեր էլնի: Քյե որ լոխկըցուցեն, քյո կյլխու ճյուր ոսկի տառնա, տյու որ ծրծղաս՝ առքավութնի ծաղիկներ թափեն քյո կող պյուլոր, քյե մախ մ'չէլնի, չյում Հընդյամանա սար խազալըմ կա, են խազալի փորի մեչ կութի մ' կա, են կութու մեչ տեղին ուլնիկըմ կա, են ուլնիկ քյո խոկյին ի, չյում են ուլնիկ չմըշըռտեն, ծով չթալեն, քյե մեռնել չէլնի. անունտ էլ Գոլ-Բարին ի:

Մեկ էլ ռիրդան դավրեշ կուրիսավ. ախչիյն մնայ մենակ, եր տառոյավ էկավ խոր տուն:

Խեր որ տեսավ ախչկան կյալ, պարկայավ. ասայ. - Ախչի՛կ, թե ես քյե տվեր ի դավրեշին, ինչի՞ տառոյար էկար:

Ախչիկ կասի. - Թաքավոր ապրած կենաս, կնայի դավրեշ կընդա, զիկ ասայ. «Տառոյի կնա, քյե նվիրիր եմ քյո խոր, անունտ էլ Գոլ-Բարին ի»:

Թաքավոր շատ ուրախցավ, պըռնեց ախչկան իրիսներ պաքյեց, ասայ. - Դե կնա մո քյո մեր:

Էլան արայ ումում դյունյեն, թե իմ ախչկան անուն Գոլ-Բարին է:

Ախչիյ կնայ մոտ ուր մեր: Քյանի մ' օրիս սորա ախչիյ մտածեց,

ասաց: «Զէ՞ որ դավրեշ զիկ օխնիթք ի փվե, փիսնանք աղո՞ղթ ի»:

Խընթրեց ուր մոր մոտեն, ասաց. - Մարե՛, ի՞նչ կէլնի, քիչըմ ճյուր տու տուայեցուցել, կյըլեխս լվամ:

Մեր շոտըմ ճյուր իտուր տայեըցուցել, կանչեց կառավաշներ, ամր արաց, ասաց. - Տարեքյ Գոլ-Բարինի կյլեխ լվացեքյ:

Գոլ-Բարին ասաց. - Մարե՛, աստված սիրես, էսա մեյ փիր տյու արե իմ կյլոխ լվա, թո մարթ չիկյա:

Մեր ախչկան խաթրից չէլավ: Էլավ տարավ, իտրիր մեչ թաշտին, կյլեխ լվաց պըռծավ, Գոլ-Բարին ասաց. - Մարե՛, էսա ճյուր մի թափե, թող մնա, քյե կասեմ:

Մեր խաթրից չէլավ:

Էլան էկան սահաթից սորա, Գոլ-Բարին ասաց. - Էլի քյո ծեռնով կնաւ էն թաշտ թափի:

Մերն էլավ կնաց որ թաշտ թափի, տեսավ որ ի՞նչ. ճյուրը տառցե կուռս ոսկի: Տառցավ եր, ուրախ-ուրախ խարար իտուր թաքավուրուն, ասաց. - Թաքավոր ապրած կենաս, քյո ախչկան կյլխու ճյուր ոսկի յի տառցե:

Ախչիյ որ լսավ, ուրախ սըռտով ծընծղաց, տեսավ որ ի՞նչ. ուր չորս պիլոր առքյավութնի ծաղիկ ի թափե: Ժողվեց ծաղկըներ, արաց փունջ, սառեց վազեվազ՝ տարավ թաքավուրուն:

Թաքավոր որ տեսավ՝ շատ ուրախցավ, էլավ էլան արաց ումում դյունյեն, ծեն ինկյավ աշխարե աշխար, թե թաքավուրուն ախչիկըմ կա, կյլխու ճյուր ոսկի կտառնա, որ ծընծղա՝ կող պիլոր առքյավութնի ծաղիկ կթափեն:

Բիթյուն թաքավորներ զարմանքյ մնացին, շատեր կուզին տանին ուրենց լաճեկաց, սիրտ չին անե թիմե թաքավուրուն, կասեն. վա՜յ թե չի տա:

Վարհասըլի, ինչ կյլոխ ցավկցուցեմ, մեր թաքավուրու պան-կյոռծն էլավ. զմեն օր ախչիյ լոխկըցուցել, մեյ-մեյ թաշտ ոսկի վերուցել: Զմեն օր ախչիյ կծընծղեր, ծաղկըներ կթափին պիլոր, փունջեր կկապին, թաքավուրու էօդի զարդարայըն էր: Թաքավուրու ուրախութնին էլ չափ չկեր:

Մեկ օր Հընդյամանա քյաղքյի թաքավոր կէլնի կուգյա մոտ մեր թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենա՛ս, ես լսիր եմ, քյե ախչիկըմ կա, որ կյլխու ճյուր ոսկի դյուռ կտառնա, ինքյ ծընծղա՝ առքյավութնից ծաղկըներ կթափեն: Կիտեմ, օր ըմ չէ՝ օր ըմ պիտի տաս իրկան, ախչկան բախտի վերեն նստել աղեյ չի, իմ տղեն էլ քյո մշայն ի, պե չրուղ արա:

Թաքավոր կմտածի, կասի.«Բալքյի պարին էսա յի». խոսք կուտա Հընդյամանա թաքավուրուն: Նշան կտնեն, շատ քյեֆ-ուրախութեն կանեն:

Հընդյամանա թաքավոր կէլնի կէրթա պատրաստութեն կտիսնա, որ խարսնիս անի:

Վարհասելի, խարսնիս կուռմիշ կանեն, թափ-թվայիներ կթալեն, ծիավորներ կէլնեն խաղ: Մեկ ամիս ի, որ Գոլ-Բարինի խարսնիսն ի. պանել-տատել չկա, հար քյաշ իկե թամաշա:

Պիրիսին Գոլ-Բարին ուր երկու կսաավաշի խետ տրին ֆայթոն, աչու-ծախու ծիավորներ՝ մոմ-խաչկալ ծեռքյներ, առին Գոլ-Բարին, տարան:

Տյու մի ասե Գոլ-Բարինի կառավաշներ մեր վ'ախչիկ են: Էտա ախչիյն էլ տախայեր ի, էլե քսան խինգյ տարեկան, մարթ չտանե իրկան:

Գոլ-Բարու խարսնիս որ կտիսնա մեր տախ ախչիկ, ջան քյոշքյոշանա, լըփլըփոց կինի սիրտ, կասի. «Ա՜խ, տեր աստված, իմ բախտ եփ պիտի պայվի»:

Մեկ էլ մեկ իրիկուն ախչկան սիրտ կավիրի, ուր մոր կասի.

-Մարե, ես պիտի Գոլ-Բարին սպանեմ, ես ինոր տեղ էրթամ թաքավուրուն խաբս էլնեմ:

Մեր շատ կհակառակվի, ճար չէլնե խետ ախչկան:

Մեկ օր էլ որ քսան օրիս ավել ճամբախ են կնայի, կխասնեն մեկ մեշի մ'մոտ: Կառավաշներ կիշըրով կպիրեն Գոլ-Բարինի աչքեր կպորեն, կտնեն ուր ջեռբեր, խալըվներ կխանեն, էն ախչիյ կխայնի, ուր խալըվներ կխակյուցի Գոլ-Բարինին, կվերուցեն կտանեն կթալեն մեշի մեչ, կտառնան կուկյան, կնստեն ֆայթոն, կիշըրով ջյույաբ կուտան խարսնըվորնեկայ, կասեն. - Գոլ-Բարին անխանգյիստ ի, կասի՝ «Թող էլնեն էրթանքյ շոտ խասնենքյ մեր տեղ, արիվու շյուկուն էլ չեմ կանա տիմանա»:

Խաբսնըսվորներ կէլնեն կիշըրով կինեն ճամբախ, յահու-յալլահ, կէրթան: Շատ կէրթան թե քիչ կէրթան, կխասնեն Հընդյամանա քյաղաքյ:

Յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, թաքավուրու լաճ կտիսակեն վեր կառավաշին:

Թաքավուրու լաճ կտիսնա որ ի՞նչ Գոլ-Բարին, ի՞նչ պան. ինչ կանդար որ կլոխկըցուցեն, կյլխու ճյուր ոսկի չի տառնա. ինչ կանդար որ կծըծոցուցի, կառավաշ իշու պես կեղոհեղոա՝ ծաղիկ չըթափե, ինքյն իրիշկաս՝ սև կյառշել, քյաֆթառի մեկ:

Թաքավուրու լաճ շատ կտրտմի, կէրթա մոտ ուր խեր, կասի. - Խերիկ, խեր չտիսնաս, էս ի՞նչ բալա էր պիրիր կապիր իմ կյլոխ: Տյուքյ կասիքյ խորուտկութենին նման չկա, կյլխու ճյուր ոսկի կտառնա, որ ծըծոգա առքյավութենի ծաղիյ կթափի: Նա էն կա, նա էն, էն էլ ջահնամ՝ ինքյն ի սև կյառշել, մեյ ճար ըմ արա, թե չէ՝ զիկ կսպանեմ, յա ինոր:

Թաքավոր կասի. - Օղուլ, բալա՛մ, ի՞նչ ճար անեմ, էն որ խապվիր ենք, ինոր խերն ի զալըմի մեկ, կըռվելով վեր էն չենքյ կանա, ախչկան պամ էլնի, մեր երկիրն էլ խողով-ճրով կընկուցի խեր լսելուն: Ի՞նչ ճար անեմ, պիտի քյաշենքյ:

Թաքավորու տղեն ուր սըռտի մըռմուռիս զմեն օր մեյ դաստն թաց ճպոթ կկտրի, իրիկուն քյնոս կախ կառնի, կփըռթնի վեր կնկան ջանին՝ զար որ կզանես: Չյում ճպոթներ կխլըսցուցի: Ախչիյ կիսամեռ կինի էնտեղ, ինքյ կէրթա ուր տեղ կքյնի:

Զմեն օր իսոնց հալ էսա յի: Ինոնք թո մնան մեչ ինոնց հալին, մենք կյանքյ դեխ Գոլ-Բարին, տիսնանքյ ի՞նչխ էլավ:

* * *

Գոլ-Բարին էն օրվե որ թողեցին մեշեն, ինքյն աչքեր կոր, զն չի տիսնա, նա ճար կիտի, նն ճամբախ: Կնստի ծառի մը տակ, կմնա:

Էտա մեշեն որտեղ որ կկընդընվի, ինոր մոտռխաս քյաղաքյըմ կա, էտա քյաղքյի մեչ ընթյար մարթըմ կա, յոթ ախչիկ ունի: Խեղճ մարթ զմեն օր կուկյա մեշից օր մեյ շլնյ փետ կտանի, կծախի, կուտա ութ խաց կառնի՝, յոթն ախչընեկաց, մեյն էլ ուր:

Էն մեկ օր էլ փետ կտանի, կծախի, կուտա խացի, ին խաց կուտան: Կասի. «Տեր աստվա՛ծ, հմեն ավուր իմ շլնկ ութ խաց կպիրեր, ես ավուր թիթն էլ էր, ի՞նչխ էլավ որ ին խաց պիրին: Կաչկա իսա մեյ խաց մեկու մը կսմաթն ի, իմ ծեռնով պիտի էլնի: Իսա խաց պիտի պախեմ, խենքյ ինչխ կէլնի»: Իրիկուն կէրթն տուն, յոթ խաց կուտա ախչընեկաց, մեյն էլ ինքյ կուտի:

Առատուն էլմ'էլ կէլնի, չվան կառնի, կէրթն մեռշեն: Կտիսնա որ չուտես-չխմես թամաշա անես, խորոտ ախչիյըմ երկու աչքեր կոր, նստե ծառիմ' տակ: Կուկյն մո Գոլ-Բարին, կասի. - Ախչիկ, ընս՞ ես, ջը՞նս ես, տյու վո՞վ ես ընտեղ նստուկ: Որտեղե՞ն ես իկե:

Գոլ-Բարին կասի. - Չեմ կիտե, ես էլ կոր ախչիյ մ'եմ, զիկ ընտեղ կընդա, մոլըբեր եմ, չեմ տիսնա որ ճամբախ էրթամ: Աստծու սիրուն, աղեկութեն մ'արա՛, զիկ տար մեչ քյաղքյիմ', օր կէլնի ես էլ քյե յարամիշ կէլնեմ:

Ֆուքարեն որ կտիսնա ախչկան սալաչանքյինել տիժար կուկյա, կխանի ծոցեն էն մեկ խաց, կուտա Գոլ-Բարինին, կասի. - Ա՛ռ՝ էսա խաց կե, քյո կսմաթն ի, ես յոթ ախչիկ ունեմ, որ առանց ինոնց ամրին չեմ կանա պան մ'անե: Իրիկուն կէրթամ տուն, կխառցուցեմ, թե կնբյուլ արին, վնդ կուկյնմ, քյե կտանեմ:

Ֆուքարեն էլըմ' էլ ուր շլնյ փետ կպընին, կպիրի կծախի, ին խաց

կառնի, կէրթա՛ տուն: Մեյ մեկին մեյ խաց կուտա ախչկընեկաց, մեյն էլ ինքյ կուտի, մեյն էլ կպախի Գոլ-Բարինին: Ախչկընեկաց կասի. - Ախչկներ, էսօր պանն մ'եմ տիսե, ծե կասեմ, համա զիկ ականջ արեքյ:

Ճոչ ախչկներ մընոութ կշընոճեն, կասեն. - Վով կիտի էլմ' ինչ ընսրանք ի:

Պըստիկ ախչիկ կասի. - Ասա, հայրիկ, թող ինոնք ականջ չանեն, ես կլսեմ:

Ֆուքարեն կասի. - Բալամ, էսօր կնանցի մեռշեն, տեսա որ ի՞նչ. մեյ խատ խորոտ ախչիկըմ, կասես խրեղեն, երկու աչքեն կոր, ճամբախ մոլեոր էր, նստեր էր ծառի տակ: Զիկ աղաչանքյ ինկյավ, ասաց. «Բարալըդ, զիկ տա՛ր ծեր տուն, օր էլնի քյե յարամիշ կէլնեմ»: Ընկուն տիժարս էկավ:

Ճիչ ախչկներ էն դեհեն մեյ ծենով բոռացին. - Որ էն մտավ էսա տուն, մենքյ մեյս էլ չենքյ տնտրի: Խորածին տես, մե շատ կառցավ խաց պիրեր, մնաց կուրուն: Վո՞վ կիտի, ինչ ադաստանզութեն ի արե, որ աչքեր պորիր են. էն ի մնացե պիրես մեր տուն, մեր արուռն էլ էրթա՛: Առանց էն էլ զաթի մարթ չիրիշկե վեր մեր յա:

Պստիկ ախչիկ կասի. - Խերինկ, թող ինոնքյ ասեն, տյու ականջ մ'անե: Վա՛ղ էն ախչիյ պե, ես կշախեմ: ինոնքյ թող առնեն ուրենց մեյ-մեկ խաց, ես իմ խացի կես, տյու քյո խացի կես, կուտանքյ ինոր, մենքյ յոլա կէրթանքյ:

Էն մեկել օր մեր ֆուքարեն կէրթա՛ մեշեն, ուր պախած խաց կուտա Գոլ-Բարինին, պստիկ շլակըմ փեր կշլկի, Գոլ-Բարինի ծեռ կպընոնի, կառնի կուկյա մեչ քյաղքյին, փեր կծախի, էլըմ կուտա ին խաց կառնի, կէրթա՛ն տուն:

Վեց խաց կուտա վեց ախչկընեկաց, մե՛յ խաց էլ կուտա պստիկ ախչկան, մեյն էլ կվերուցի ուր, կասի. - Տեսեքյ, տյուքյ էրեկ խացի խամար կոիվ կանեքյ, կոր ախչկան կսմութ էսօր խաց մ'ավել իկե, ես էլ ինոր:

Ճոչ ախչիկ էն դեհեն կխասնի, էր խաց կխլի, կասի. - Աստված կիտեր, որ ես լվացք արե, անութի յի, էն էլ իմն ի:

Պստիկ ախչիկ կտիսնա կոր ախչկան խաց խլեցին, ուր խացն իտուր կոր ախչկան, ասաց. - Աղա՛, քյո խացն էլ զիկ ինանն քյե:

Վարհասըլի, ինչ կյլոխ ցավցուցեմ, քյանի մ'օր ընկընա կմնա՛: Ամեն օր խալիվոր կէրթա՛ փեր կպիրի, կուտա խացի, կպիրեն իդարաւ կանեն, կապրեն:

Էն մեկ օր էլ Գոլ-Բարին պստիկ ախչկան կասի. - Քյուրինկ, ի՞նչ կէլնի, կտորըմ ճյուր տայիցու կյլոխս լվամ:

Պստիկ ախչիկ շոտըմ կէլնի, կէրթա՛ տրրկընեկաց տընից էրկու

փղթիր, ճեղքում գյազ կպիրի, թոներ կվառի, ճյուր կտայիցուցի, Գոլ-Բարինին կասի. - Դե արե՛ պուպուզի ըստեղ, կյլոխտ լվամ:

Գոլ-Բարին կասի. - Ախը մենք չենք սովրե կյեղնի վերեն կյլոխ լվալ, ի՞նչ կէնի թաշտ մ'էլ կընդի:

Պստիկ ախչիկ կվազի փղրկըցի տնեն թաշտըմ կպիրի, Գոլ-Բարինի կյլոխ կվըլա: Գոլ-Բարին կասի. - Էտա ճյուր սալա մի թափե, զիկ տար տուն, դեռրըմ մնա, քյե կասեմ:

Պստիկ ախչիկ Գոլ-Բարինի խաթրիս չէնի, թաշտ կթողնի առանց թափել, Գոլ-Բարինին կտանի տուն, կպառկըցուցի վեր թորվան, սահաթիս սորա Գոլ-Բարին կասի. - Դե կնա, թաշտ թափի:

Պստիկ ախչիկ կէնի կէրթա կտիսնա որ ի՞նչ. թաշտի ճյուր տառոցե ոսկի: Վըժալեն կուկյա տուն, քյուրեկայ կասի. - Ծեր ումուտ խորեմ, կոր ախչկան չիքյ խավնե, դե էլեքյ էկեքյ ոտքեր լիզեքյ, գյո կյլխու ճյուր ոսկի յի տառոցի:

Քյուրեր կէլնեն կվազեն կէրթան, թաշտ կպիրեն ներս, ուրախութեն կխասնեն՝ դեխ Գոլ-Բարին, մեկըն ոտքեր, մեկըն ծեռքյեր կքյաշեն ուրենց պերան, կասեն. - Ամա՛ն, մե ների, մենք չկիտցանքյ, ըստըրիս զմեյնս էլ քյե կուրբան ենքյ, ինչխ որ ասես՝ ըսկուն կանենքյ:

Գոլ-Բարին շատ կուրախնա, կէլնի կնստի կծընդա: Ախչըկներ կտիսնան, որ ուրենց չորս պիլեր ծաղիյ թափան, կասեն. յա՛, էսա ի՞նչ ծաղիկ են:

Գոլ-Բարին կասի. - Ժողովեքյ պախեքյ, մարթու մե՛քյ ասե:

Իրիկուն խեր որ կուկյա տուն, կասեն. - Խերիկ, շըլակով փեր պիրելուց պըռծար, աստված մե իտուր, կոր ախչիկ լոխկըցուցինքյ, կյլխու ճյուր ոսկի տառոցավ, ինքյն ծընդաց՝ առքյավութնի ծաղիկ թափան:

Էն օրիս էլ ֆուքարեն չէրթա փեր, ոսկիքյ կծախի, խորոտ քյոշկ սարե մ'կշինի, խաս-բախչեն առուց, կոտրեն, կխմեն, Գոլ-Բարինի սայիս քյեֆ կանեն: Պան-կյոռծներ էլեր ի զմեն օր Գոլ-Բարին լոխկըցուցել, օր մեյ թաշտ ոսկի վերուցել:

Օրըմ Գոլ-Բարին փենջարեն թողե պաց, պառկե վեր ուր դեռշկին, մեկել բիրդան ջուխտըմ խավքյ կնստեն մեյ փենջարին:

-Էլյաս, - կասի Խըդրը, - էսա վի՞ր տներն ի, էսա ի՞նչ կոր ախչիկ ի ըստեղ պառկուկ:

Խըդրը կասի. - Տյու չե՞ս կիտե, որ Գոլ-Բարին ի, ինչ դավրեշ խնձոր իտուր թաքավուրուն, էսա էլավ: Սորա դավրեշ օխնեց՝ կյլխու ճյուր ոսկի կտսոնա, որ ծընդա՝ առքյավութնի ծաղկըներ կթափեն: Սորա փվեցին Հընդյամանա թաքավուրու լաճուն, ճամբախ կառավաշներ աչքեր պորիցին, թալիցին մեշեն: Էս խաղիվոր

ֆուքարա էր, փեր կպիրեր, կուտեր խայի, ախչիկ որ տեսավ, պիրեց ուր տուն, մկա կլոխկըցուցեն, օր մեկ թաշտ ոսկի կվերուցեն, էսա տներ շինիր են, քյեֆ կանեն:

Էյաս կասի. - Խըդը՛ր, ապա էլ իսոր ճար չկա, որ աչքեր ծրի:

Խըդըր կասի. - Ինչի՞ չէ, որ Գոլ-Բարինի ականջ վեր մե յի, մենքյ մկա կթըոնենքյ, մեյ խատ փիտուր կինի մեզնից, թող էն փիտուր վերուցի պախի, կես ծըմռան ուր խաս ռնխչի մեչ սիկիվիլի մը բյութա կա, ինոր կուշտ մեյ խատ պատակ, սըվրուկ խոտըմ կայուսնի, ծան տըկեն կպանցըրանա, էն խոտ տա քյաղել, տնի խով տեղ, աղեկըմ չորնա, մշրի, անի թեոզ աղըրի պես: Սորա էն առքյավութնի ծաղկըներ որ կթափեն՝ մեյ դաստա կապի, ճամխի Հընդյամանն: Էն տարող տանի թաքավուրու լաճու փենջարի ատաճ ռոռա. «Ծաղիկ կծախեմ, խորոտ ծաղիկ»: Թաքավուրու խարս որ կտիսնա Գոլ-Բարինի ծաղիկն ի, կճանչընա, կկանչի, կտանի վեր, կասի՝ կյին ասա: Թող ասի. «Իսնի աչքով կծախեմ, ջուխտըմ իսնի աչք տու՛ր, որ տամ»: Գոլ-Բարինի աչքեր ուր կառավաշի ջեռրն ի, որ մկա թաքավուրու խարս ի էլե: Խարս Գոլ-Բարինի աչքեր կուտա, ծաղիյ կառնի: Աչքեր խետ առնելուն թող էլ ետ չիրիշկա, փախնի կյա: Գոլ-Բարին թող առնի ուր աչքեր, տնի ուր տեղ, մեր փիտուրով էն թեոզ ցանի վերեն, աստծու խրամանքյով կծրի:

Ֆը՛ռռ, թռան կնացին:

Գոլ-Բարին կանչեց պստիկ ախչկան, ասաց. - Ըստեղրանքյ փիտուրըմ կա, կընդի պե զիկ:

Պստիկ ախչիկ փետուր կընդուվ:

Գոլ-Բարին ասաց. - Դե՛ տիր սնդուկ, պախի, երբ որ կուզեմ՝ տուր զիկ:

Գոլ-Բարին կանչեց ուրենց խեր, ասաց. - Դե՛ էլի, խալըվներտ փոխի, չանթիկըմ թալ թևտ, մեյ դաստա իմ ծաղկընեկաց տիր մեչ, կնա Հընդյամանն, թաքավուրու լաճու փենջարի առաճ կանչի. «Ծաղիյ կծախեմ, խորոտ ծաղիյ»: Ամա մոյյաթ կաց, հ'ուրուշ հեչ մեկ մարթու նշանց չի տաս, չյում թաքավուրու խարս, որ իմ կառավաշն էր, փենջարեն կպանա, քյե կխառցուցի՝ ի՞նչ ծաղիկ ի: Տյու կյախտիկ չանթկի մեչեն էսա ծաղիկ ինոր շանց տուր, քյե կկանչի վեր, ուր օդեն: Ինչ կանդար որ փարա կուտա, ծաղիյ չիտաս, ասա էսա ծաղիկ կուտամ մեյ ջուխտ իսնի աչիչ, էն իմ աչքեր ուր ջեռրեն կխանի, կուտա քյե: Ծոտըմ աչքերն ա՛ռ, ծաղիյ թալ դա, թող փախի արե, եր չիրիշկաս իսկի:

Մեր ֆուքարեն կելնի խալըվներ կփոխի, չանթեն կթալի թև, քիչըմ խարջըլըղ կվերուցի, ծաղիկ կտնի մեչ չանթկին, կինի ճամրախ:

Շատ մի կերթա, քիչ մի կերթա կխասնի Հընդյամանն: Կերթա

թաքավուրու լաճու փենջարի տակ կբռռա. «Ծաղիկ կծախեմ, խորոտ ծաղիկ»:

Թաքավուրու խարս որ կլսի ծաղիկ ծախելու ծեն՝ փենջարեն կպանաւ, կասի. - Ի՞նչ ծաղիկ են, տիսնա՞մ:

Ֆուքարեն չանթկի մեչեն կսխտիկ ծաղիկ շանց կուտա:

Կասի. - Պե վե՛ր, պե վե՛ր, տիսնամ իտա խարամ ծաղկըներ:

Ֆուքարեն կէրթա վեր:

Խարս կասի. - Ի՞նչ տամ էտա ծաղկըներեկաց:

Կասի. - Իսա ծաղկըներ կուտամ մեյ ջուխտ իսնի աչիչ:

Խարս կասի. - Ա՞չք ուստ ի, խո իմ աչքեր չե՞մ պորե տա:

Ֆուքարեն կասի. - Տյու թաքավուրու մը խարս ես, զմեն պան մո քյե կկընդընվի, որ մարամ անես, իսկի պանըմ չի:

Բիրդան Գոլ-Բարինի աչքեր կինի թաքավուրու խարսի միտք: Ջեռբեր կաչքի, կասի. - Ջուխտըմ խին աչք կա, իտանց կուտա՞ս:

Ֆուքարեն կասի. - Տու՛ր, պան չկա, կտանեմ կլվամ՝ էլըմ կէլնի թազաւ:

Ֆուքարեն Գոլ-Բարինի աչքեր կառնի, ծաղիչ կթալի դա, առանց իտն իրիշկալու, յահու-յալլահ, կփախնի, կուկյա, չյում տուն: Աչքեր կուտա Գոլ-Բարինին:

Գոլ-Բարին կառնի աչքեր, չյում ծըմըռվան խուտն էլ պիրել կուտա, կչուրցուցի, կմշըռտի, կանի թեռզ, ուր աչքեր կտնի տեղ, իտա փետրով թեռզ կյանի վերեն: Աստծու խրամանքյով բիրդան աչքեր կպայվեն, էլըմ կէլնի դաշվան Գոլ-Բարին:

Թաքավուրու խարս Գոլ-Բարինի ծաղկըներ որ կառնի, կպախի, չյում իրիկուն թաքավուրու լաճ կուկյա, էլմ'էլ ճպոթներ ծեռ:

Թաքավուրու խարս կասի. - Տնավե՛ր, թրփելով զի մաշըցուցիր, էսօր կեսօրին մեկ կտոր կաչ սիրտս ուրախցավ, ծըծղացի, ծաղկըներ թափան, առա կյսկո, խենքյ տիսի՞ր ես ըսկընա պան:

Թաքավուրու լաճ որ կտիսնա ծաղկըներ, շատ կզարմանա, կառնի ուրախ-ուրախ կէրթա մո թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, տե՛ս, էսօր իմ կնիկ ծըծղացեր ի, ծաղիկ են թափե:

Թաքավոր կասի. - Շատ աղեկ ի, բալամ, ըստրիս խորոտ շախի, որ հա ծըծղա, ծաղիկ թափի, կյլխու ճյուր ոսկի տառնա, տյու ինչի՞ սաբր չես անե:

Թաքավուրու լաճ կտսառնա կուկյա կսիրվի վեր ուր կնկյան:

Էտ խարսի մեր որ մկա ուր ախչկան կառավաշն ի, կտիսնա որ թաքավուրու լաճ սիրվե վեր ուր ախչկան, կասի. - Ախչիկ, ի՞նչ արիցիր, որ սիրվավ վերետ: Ես էն կանդար թուխտ տվի անել, ջանդու արի, ճար չէլավ, տյու ի՞նչ արիր:

Թաքավուրու խարս կասի. - Մեկ օր մեկ ֆուքարե մը մեյ դաստա

Գոլ-Բարինի ծաղկընեկայ պիրիր էր, ինչ որ արի, ասայ. «Կուրամ իսնի աչիչ»: Ես էլ Գոլ-Բարինի աչքեր տվի, ծաղիյն առի, տվի թաքավուրու լաճուն, սիրվա վերես:

Մեր կասի. - Ը՞մի, քյո՞ տուն ավիրի, էն ծաղկըներ Գոլ-բարին էր ճամխե, ուր աչքեր ֆոսրավ, վանղ կսաղանա, կէլնի կուկյա. ես էլ կուրիսա, տյուն էլ: Էլ ի՞նչ ճար անենքյ, էլնեմ էրթամ մոտ ջանի պառավ, տիսնամ ի՞նչ ճար կանի:

Մեր կնայ քյաղքյի մեչն ինգյավ, խառոյուչ, փնտրեչ, մեկ խաստ աղեկ ջանի արող պառավըմ կընդանվ: Պառվուն մեյ-մեկ ուրենչ կյլխու կյայած պատմեչ:

Պառավ ուր ջաղու կյիրք պայեչ, շատ իրիշկայ, քիչ իրիշկայ, ասայ. - Քյուրիկ, էսա Գոլ-Բարին որ տյու կասես, ինոր խոգյին շատ չաթին տեղ կէլնի, չյում չէրթան ինոր խոգյու տեղ ուրնիչ չիասկնան, ճար չէլնի:

Թաքավուրու խարսի մեր կասի. - Տյու կիտես. ինչ որ կիտես, էն արա՛: Ինչ որ ուզես, կուտամ:

Ջանդի պառավ կէլնի կինի ճամբախ: Շատ մի կէրթա, քիչ մի կէրթա, չյում կխասնի Գոլ-Բարինի մնայած քյաղաքյ: Կէրթա դյուզ Գոլ-Բարինի տոան վերեն կկայնի: Էն կանդար կբաշլայի ուր ֆելբազ խաղերն անել չյում Գոլ-Բարինի յոթ քյուրեր կսիրվեն վեր պառվուն: Պառվուն կտանեն տուն: Գոլ-Բարինիչ կյախտիկ կտնեն մեկ էօդեն, չյում իրիկուն պառավ շախկա-շեյլինիկյ կանի, ախչկըներ կծծղան. նա դարդ ունեն, նա մառախ, պան-կոռծընեռն էլեր ի պառվու խետ խաղալ: Էլ Գոլ-Բարինի մոտ չեն էրթա, խեղճն մնայե մենակ մեչ ուր էօդին:

Մեկ օր Գոլ-Բարին կնեղանա, կխառոյուչի, կասի. - Տյուքյ դո՞ր կէրթաքյ չյուր իրիկուն չեքյ էրևա, զի թողեր եք մենակ մեչ էօդին:

Ախչկըներ կասեն. - Քյուրիկ, ապա չե՞ս ասե, մեյ խաստ պառավըմ կա մեր տուն, որ տյու տիսնաս, էլ չես ուզի կընշտնեն կայնես, էն կանդար որ շախկա-շեյլինկյ կանի:

Գոլ-Բարին կասի. - Կնայեքյ պիրեքյ ընտեղ, թող էնա տեղ նստի, ծե ծընծղայուչի, թայլա ես մենակ չմնամ:

Կէրթան պառավ կպիրեն էօդեն:

Պառավ խե կյալուն էն կանդար տախլակութեն կանի որ, Գոլ-Բարին էլ կսիրվի վերեն: Ընկդուն կէլնին որ, էլ Գոլ-Բարին առանչ պառվուն ուր տեղն բիլա չի պառկե. մեյտեղ կպառկեն:

Մեկ օր պառավ սուտ խիվինդութեն կտնի վեր ուր, կիշեր չյում լեն կտրընիտրքյա:

Գոլ-Բարին կէլնի տեղ-դարման կանի, ճար չէլնե:

Պառավ կասի Գոլ-Բարինին. - Տյու որ կուզես ես ժրեմ, քյո

խոկյին դո՞ր ի, ասա՛, մեյ խատ խոտոտամ, կժրիմ: Ես քյո սիրուն եմ խիվընդյե:

Գոլ-Բարին կասի. - Ա՜խ, քյե մեռնեմ պառա՛վ, իմ խոկյին ո՞ր տեղեն պիրեմ, որ տյու խոտոտաս, իմ խոկյին գյո Հընդիյամանա սարի կյլոխ խազալում կա, էնոր փորի մեչ կութի մը կա, էն կութու մեչտեղին ուլնիկում կա, էն ուլնիկն իմ խոկյին ի:

Պառավ որ կլսի, մեկ-երկու օր էլ քյաշ կուկյա, մեկ օր բիրդան պառավ կկուրիսի:

Գոլ-Բարին տեսավ որ պառավ կուրիսավ, նոր ինկյավ ֆառկուն, ուր սխալն նոր իմցավ: Կանչեց ուր քյուրեկայ, ուրենց խոր ասաց. - Իմն պոծա՛վ, ես կիտեմ, որ պիտի մեռնեմ. էն պառավ իմ տուն էլ, ծեր տուն էլ ավիրես: Աման ես մեյ պատվեր կուտամ, ասված սիրեքյ, ըսկուն արեքյ. ես որ կմեռնեմ, էրկու լխեֆ, էրկու դոշակ, պուռց, կուշթուքյի, մեյ խատ ջյուլ, խեստ զիք կառնեքյ, կտանեքյ Հընդիյամանա սարի կլյոխ ախպյուրում կա, էն ախպրրի վերեն խորոտ օդե մը կշինեքյ, իմ յաթադ կիսկեքյ, զիկ կպառկրցուցեքյ մեչ, դյուռ կշինեքյ, պալնիս կթողնեք մեչ տռան, կթողնեքյ կուկյաք, տյուք կիտեքյ, ինչխ կուզեքյ ըսկուն ապրեքյ:

Գոլ-Բարին թող մնա մեչ ուր մառախին, մենքյ կյանքյ դեխ պառավ:

Պառավ փախավ կնայ չյում խասավ Հընդիյամանա քյաղաքյ: Թաքավուրու խարսի մոր կանչեց, ասաց. - Ախչկանտ կասես, որ թաքավուրու լաճուն ասի, էրթա ես մեր տիմայի սար, էնտեղ մեկ ախպյուրում կա, էն ախպրրի կուշտ ուր խամար փռսում փորի, մտնի մեչ: Էն սարի մեչ մեկ խազալում կա, որ յոթն օր տիրում ճյուր կխմի, էն խազալ թող ըսպանի, խազալի փորի մեչ կութի մը կա, էն կութու մեչ տեղին-տեղին ուլնիկում կա, պիրի կախի թաքավուրու խարսի վզեն, ինոր բախտ կպայվի:

Խարսի մեր պառվուն շատում աղիյեքյ իտուր, ուրախ-ուրախ տառցավ կնայ տուն, ուր ախչկան պատմեց պառվուց լաածներ ու պատվիրեց ասաց որ, իրիկուն թաքավուրու լաճ որ կուկյա, խրկի թո էրթա, բալքյի էն ուլնիկ պիրի:

Իրիկուն թաքավուրու լաճ էլմ'էլ մալյուլ-մըռութ կնայ ուր էոդեն, ասաց. - Տո՛ քյոփոդլու ախչիկ, ախոր քյո ծաղրը խո էն մեյ տիր չէ՞ր, տյու զմեն իրիկուն էլ կծրծդաս, ապա ու՞ր է քյո ծաղիկ, ապա ու՞ր է քյո գյլխու ճյուր ոսկի չի տառնա, վալլահ, քյե պիտի սպանեմ:

Թաքավուրու խարս կասի. - Տնավե՛ր, ես իկեր եմ չյում մկա օր-արև չեմ տիսե, հմեն օր թրփոց, հմեն օր պրշտոց: Որ տյու աղորթ կասես, կնա էնա սա՛ր, էնտեղ խազալում կա, էն խազալ սպանի, ինոր փորի մեչ կութով տեղին ուլնիկում կա, պե կախեմ իմ սրոտեն: Կյլխուս ճյուրն էլ ոսկի տառնա, ծրծդամ ծաղիկ էլ թուտի:

Թաքավուրու լաճ որ լսավ, սուեց ուր ավջիքյ, կնայ էլավ սարի կյլոխ, ախպյուր կընդավ, ախպըրի կուշտ ուրենց տեղ շինեցին, մտան մեչ, չյում յոթն օր թըմըմավ, խազալն էկավ, զատամանց որ ախպըրի կուշտ սնութեն տիսավ, փախավ կնայ:

Յոթն օրից սորա մեկել էկավ: Շատ ծարվըցիր էր, էլ սնութեն-պան չաչկեց, խեր խասնելուն ռաշլայեց ճյուր խմել:

Ավջիքյ նշան պըռնիցին, խազալ զարկին:

Թաքավուրու լաճ, խասավ խազալի փոր ճղեց, կութին խանեց, ուրախ-ուրախ խեծավ ուր ծին, էկավ տուն:

Կութին տարավ ուր էօդեն, տեղին ուլնիկ մեչեն խանեց, քյառսուն-իսուն ոսկիյետեկայ մեչտեղ շարեց, վեր թելին կախեց կնկյան վզին, ռաշլայեց կնկյան սաթաշմիշ էլնել, ծընծղայուցել, որ ծաղիյ թափի:

Կնիկ իշու պես կիրռիրռա, պերան թողե պայ, կկըտկըտա. ի՛նչ ծաղիկ, ի՛նչ պան: Վարհասըլ, էրկու-իրեքյ օր էլ վերեն ընցավ, էլմ'էլ թաքավուրու տղեն ատրըվորավ վեր ուր կնկյան, ռաշլայեց էլմ'էլ առաճվան պես թըփել:

Ինոնքյ թող մնան մեչ ուրենց թըվտցին, մենք կյանք դեխ Գոլ-Բարին:

Էն օր ինչ խազալն սպանեցին, Գոլ-Բարին խիվինդյավ. ուլնիկ որ պիրիցին կախեցին ուր կառավուշի սընտից, Գոլ-Բարինի խելքյ կնայ, կիսամեռ էլավ, տեսնող կասի, էսա սաղ ի, աման նաֆաս չկա:

Խալիվոր խեր ուր յոթն ախչկան շատ լայցին, մընմընայցին, վերուցին Գոլ-Բարին, ուր ուզած յաթըղնեկայ խեր տարան չյում Հընդյամանա սարի կյլոխ, ախպըրի կուշտ, խորոտ սյուսլի էօդե մը շինեցին, Գոլ-Բարինի տեղ իսկեցին, Գոլ-Բարինին պառկըցուցին մեչ, խորոտ ծածկեցին, տյուռ շինիցին, պալնիս թողին վեր տռան, լսլելեն, մընմընալեն կնայցին ուրենց տուն, ուրենց խամար ապրան Գոլ-Բարինի սայիս:

Տարին ընցավ վերեն:

Մեկ օր թաքավուրու լաճ շատ նեղասընտրավ, ասայ. «Աստվա՛ծ, էսա ի՞նչ կրակ ի, ինկյիր եմ. ուլնիկ ուզեց՝ պիրիցի, կախիցի վզեն, չանճ իմեն շատ կծընծղա, էլըմ ծաղիկ չի թափե, վարհասըլ, ես խապվիր եմ, որ խապվիր եմ, ռարեմ էրթամ էն սար, էն օր ինչ խազալ սպանիցի, յուրիշ նեճիրներ շատ կին, էրթամ զի խամար նեճիր անեմ:

Առեց ուր զենքեր, խեծավ ուր ծին, կնայ էն սար: Էլավ սարի կյլոխ, էն ախպըրի կուշտ տեսավ որ խորոտ էօդե մը կա շինուկ: Շատ զարմայավ, ասայ. «Տո էսա ի՞նչ ի, էն օր որ ես էկա, ընտեղ

պան մը չկեր, էսա վո՞վ ի ջանարաթ արե, իկե մեր էօլքեն առանց մեր ամրին տուն շինե»:

Ծիուց էճավ տակ, ծին կապեց քյարին, ինք յավաշ-յավաշ մոտացավ Գոլ-Բարինի էօդին: Տեսավ տյուռ կոծ, պալնիս վերեն, ասաց. «Էսա յան կտրիճ մարթ մի, որ ըստեղ տուն ի շինե, պալնիսն էլ թողե վեր տրոան, յան չէ ջարդբաշի ի»:

Տյուռ կպանա, կտիսնա որ ի՞նչ. ախչիկը պառկե մեչ տեղաց, որ չուտես, չխըմես, թամաշա անես: Կլորակ իրես, կալամկաշ ընքյվեր, ջան սիվտակ՝ պամբկի քյուլա: Ամա էսա մեռել ի, մեռուկ չի, սաղ ի, սաղ չի: Պա՜ղ քըոտինքյըմ վեր ճայտին, ոըհաթ պառկեր ի վեր ուր քյամկին:

Թաքավուրու լաճ որ տեսավ ախչկան խոբոտկութեն, քյառուն սըոտով սիրվավ վերեն, ասաց. «Վալլահ, ինչ էլ որ էլնի, ես պիտի էսա ախչկան մոտանամ, ինչ կէլնի՝ թող էլնի»:

Կնայց խեր Գոլ-Բարինին խառնըվավ, ուր գործ խոկյաց, էլավ վեր, տյուռ քյաշեց վերեն, էլմ'էլ կոծեց, խեծավ ուր ծին, ասաց. «Էլ զիկ նեճիր լազըմ չի, փախնեմ, քանի մարթ չի տիսե, ալբաթ իսոր տերըմ կա»:

Խեծավ ուր ծին, էկավ տուն:

Վարհասըլի, իրեքյ տարի վերեն ընցավ: Սեկ էլ էլըմ թաքավուրու լաճ նստիր էր ուր դարդի վերեն կմտածեր, բիրդան սարի ախչիկն ինկյավ միտ: Ասաց. «Քարեմ էլնեմ էրթամ տիսնամ էն ախչիկ ի՞նչխ էլավ»:

Էլավ ուր ծին խեծավ, կնայց սար:

Տյու մի ասե, էն օր որ թաքավուրու լաճ Գոլ-Բարինին մոտացեր էր, Գոլ-Բարին մնացիր էր տղով: Ին ամիս, ին օր, ին սահաթ, ին թախքե կթըմմի, աստված Գոլ-Բարինին լաճըմ կուտա: Խըդըր Նաբին, Խըդըր Էյլաս Գոլ-Բարինի լաճուն կշախեն, կպախեն, չյում լաճ կէլնի էրկու տարեկան:

Էն օր որ թաքավուրու լաճ էլմ'էլ կուկյա սար, Խըդըր կասի Գոլ-Բարինի լաճուն. - Է՜յ տղա, տես գյոհա քյո խերն էկավ, որ կուկյա ինչ որ կանի, ծեն մի խանե, չյում էն կյախ, որ կէլնի կէբթա, տյու խասի փեշեր պըոնի, լայ, ինգյի իտե, ինչ որ կանի, մի տատրե, չյում քյե կտանի ուրենց տուն: Քյո մոր խոկյին տեղին ուլնիկ մ'ի, ինոր կնկյան սոտիկ կախուկ, ատադորի էն ուլնիկ փոթու պըոնի ծեուտ: Ինչ որ կանեն, պայ մի թողնե, լայ, ոտքեր թփի կյետին, քյե ինչ որ կուտան, ծենտ չկտրես, հա՜ լա՜ց, հա բոոա՜, չյում քյե էլմ'էլ կպիրեն ըստեղ: Էն ուլնիկ պե՜, խըճի քյո մոր պերան, մատնով ճըխթի, թող էրթա տա՜կ, մերտ կի'ա՜ի:

Խըդըր Նաբին, Խըդըր Էյլաս կթողնեն, կէրթան:

Թաքավուրու լաճ որ կուկյա տյուտ կպտնա, կտիսնա, որ ախչկան կուշտ պստիյ տղե մ'էլ կա, ախչիկ էլըմ առաճվան պես ուր տեղ պառկուկ, նա ռանգյ վտխե, նա պան էլե, կասի. «Տեր աստվաձ, էսա թե մեռել ի, ինչի՞ չփտե, թե սաղ ի, ապա ինչի նաֆաս չխանե, չէլնե մե՞ր»: Կմնա շիվար, կասի. «Ջահնամ, տղեն պստիկ ի, խելքյ պան չի խասնե, ես էլմ'էլ պիտի իմ պանն անեմ»:

Երբ կանի, կպոծնի, կէլնի վեր, կուզի էրթալ, տղեն կխասնի փեշ կպըռնի, կասի. - Աղա, ես էլ կուկյամ:

Թաքավուրու լաճ կմնա շիվար, ինչ որ կանի, տղի ծեռնեն չազատվե, վարհասըլ, սիրտ վեր տղին կյավա, կասի. «Ջահնամ, պիտի էսա տղեն տանեմ զի խամար»:

Կխեզնի ուր ծին, տղեն կառնի ուր կյոքյ, կպիրի տուն: Կտանի թասլիմ կանի ուր կնկյան, կասի. - Կնի՛կ, տես, էսա տղի խաթրի խամար էլ քյե չեմ թըփե, մենակ էսա տղին մոյյաթ կայ՝ չիլա, ինչ որ կուզի շոտըմ տա՛ս, որ տեսա տղեն իլայ, քյո ճոչ կտոր ականջտ կթողնեմ:

Կնիյ կասի. - Ջանըմ, ինչի՞ պիտի լա, քյո սայիյ հմեն պան հազըր ի, ինչ որ ուզի, կուտամ ուտի:

Մեկ օր թաքավուրու խարս, խետ ուր կառավաշ մոր, կառնեն տղեն, կէրթան համամ: Ուրենց խալըվներ կխանեն, տղեն կթողնեն մո խլըվներ, ուրենքյ կէրթան լոխկընալ:

Տղեն կտիսնա որ թաքավուրու խարս ուր ճտնոց առծկեց ստեց էտ տեղ, տեղին ուլնիկն էլ մեչն ի, ճտնոց վերուց, թելը ծամեց չյում կտրեց, ուլնիկ խանեց, կայիմ պըռնեց ծեռ, բաշլայեց ոտքեր թըփել կյեստին, լալ, վժալ, բռռալ:

Թաքավուրու խարս որ ծեն կլսի, լեղին կկտրի, կխասնի խալըվներ կխայնի, կտիսնա որ ճտնոց կտրուկ, ուլնիկ մեչ չի, ուլնիկ տղեն պռնե ծեռ, կվժա, կբռռա: Ախու ուլնիկ տղի ծեռնեն չառնի, կվերուցի տղեն, շոտըմ կուկյա տուն, խաբար կճամխի թաքավուրու լաճուն:

Թաքավուրու լաճ կուկյա կտիսնա, որ տղեն կուլա, կառնի փետ, կուկյա դեխ կնկյան ջան:

Կնիյ կասի. - Տնավեր, ես ի՞նչ եմ արե, կնայինք համամ, իմ ուլնիկ կտրեց պռնեց ծեռ, էն կախու է չյում մկա, ըսկընա կուլա:

Թաքավուրու լաճ տղեն կկյրկի, կտանի թաքավուրու էոդեն: Ինչ որ կուտան, ինչ որ կանեն, նա ծեն կկտրի, նա ուլնիկ կթոնի պայ:

Թաքավուր կասի ուր լաճուն. - Բալա՛մ, էլ օղլի օղու՛լ օլմազ, էլի՛ որտեղեն ես պիրե, էլըմ տար տիր դա՛:

Թաքավուրու լաճ կէլնի, կխեզնի ուր ծին, կառնի տղեն, կէրթա էլմ էն սա՛ր: Կտանի տուան վերեն տղեն կէճուցի, ինքյ կպախկըվի կասի. տիսնամ տղեն ինչխ կանի:

Կտիսնա որ տղեն խեստ մտավ ներս, ուրախ-ուրախ վազեց դեխ մեր, ուլնիկ տրեց մոր պերան, մատնով ճխթեց, կնաց տակ, մեր փղոնքյթաց, թղռավ նստավ:

Թաքավուրու լաճ որ տեսավ ախչիյ նստավ, ամութու ուզեց փախնել:

Սեկել բիրդան Գոլ-Բարին բոռաց. - Գաբրել, մի՛ փախնե, մի՛ ամչնա, արե ներս:

Թաքավուրու լաճ որ լսավ, զարմացավ, ասաց. «Ջանըմ, ես իմ անու՞ն որտեղեն կիտեր, որ զի կանչեց»:

Թաքավուրու լաճն որ մտավ ներս, Գոլ-Բարին էլավ կայնավ, Գաբրելի ծեռը պրոնեց, ասաց. - Քյոռ Գոլ-Բարի կնիյ որ կա, ես եմ, ես եմ՝ որ կծընծղամ, առքյավութնի ծաղիկ կթափի, իմ կյլխու ճյուր ոսկի կտառնա:

Գաբրել զարմացավ: Գոլ-Բարին ծընծղաց՝ առքյավութնի ծաղկըներ թափան, Գաբրել ժողվեց, ուրախցավ:

Գոլ-Բարին ուր կյլխու կյածացներ բոլոր թաքավուրու լաճուն պատմեց ու խասկընցուց, որ էն պստիկ տղեն էլ թաքավուրու լաճուցն ի:

Թաքավուրու լաճն ասավ, առեց Գոլ-Բարին, ուր տղեն, տառցավ էկավ ուր տուն:

Ջալադներ կանչեցին, թաքավուրու խարս ինան խարսի մոր պիրիցին, կյլխներ տվին կտրել:

Նոր թանգնդան յոթն օր, յոթ կիշեր թոփով, թվանքյով, սազով-քյամանչով, նաղարա-զուռնով, ժամ-պատարաքյով խարսնիս արիցին:

Ինոնքյ խասան ուրենց մուրազին, մենքյ էլ խասնենքյ մեր մուրազին:

Էրկնուց իրեքյ խատ խնճոր ինգյավ, մեկն ասողին, մեկն գրողին, մեկն էլ կարտացողին: